ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ, *Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներին), Ե., Պատմության ինստիտուտ, 2016, 366 էջ:*



Մերօրյա քաղաքական զարգացումներն ուղղակի պարտադրում են պատմության մանրակրկիտ իմացությունը, քանի որ ամեն ինչ և հատկապես պատմությունն այսօր ավելի քան քաղաքականացված է: Մեր եկվոր հարևանները, փորձելով ներկայանալ տեղացիներ և ոչ մի չափանիշ հաշվի չառնելով, աղավաղում են պատմությունը և հազար ու մի անհիմն «փաստարկներով» փորձում սեփականացնել հայ ժողովրդի անցյալն ու նույնիսկ «տեր դառնալ» նրա ապագային: Այս հարցերում, անկասկած, մեղքի իրենց բաժինն ունեն խորհրդային կայսրությունը և ժամանակի կուսակցական մենատիրությունը: Որովհետև այդ համակարգը ոչ միայն արգելում էր ուսումնասիրել շատ հարցեր, այլև պարտադրում էր պատմագիտությանը ողջ անցյալը «հարմարեցնել» դասակարգային պայքարի ելակետին և Ռուսաստանին ու նրա պատմությանը հարիր զգեստներ «հագցնել»:

Այնպես որ, հենց խորհրդային համակարգի ձևավորման ակունքներում է պետք փնտրել մերօրյա արհեստածին շատ հարցերի պատասխանները, որին էլ ձեռնամուխ է եղել լավագույն պատմագետ, արգասաբեր հետազոտող և նշված ժամանակաշրջանի ու խնդիրների խորագիտակ Արարատ Հակոբյանը:

Նախանձելի աշխատասիրությամբ առանձնացող հեղինակի հերթական մենագրությունը[1] նվիրված է մեզանում գրեթե չուսումնասիրված այնպիսի խնդիրների, ինչպիսիք են միակուսակցական վարչակարգի ձևավորումը, դրա հաստատման զուգահեռները ռուսականի հետ, կուսակցական նոմենկլատուրայի առաջացումը, պետական իշխանության թևերի սահմանազատման խնդիրները, խմբակայնությունը և ընդդիմությունը կոմկուսի ներսում և այլն:

Միանգամայն իրավացիորեն հեղինակը նշում է, որ մեր ժամանակներում ԽՄԿԿ-ի և խորհրդային պետության պատմությունը պատմագիտական նոր պահանջներով ու մեթոդաբանությամբ նորովի և անկողմնակալ դիրքերից լուսաբանելու անհրաժեշտություն կա: Քանի որ ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով և կոմունիստական ամբողջատիրության վերացումով

---

[1] **Հակոբյան Ա.,** *Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում, Ե., 2010:*

Հայաստանը թևակոխել է պատմական զարգացումների բոլորովին նոր շրջան, անհրաժեշտություն է առաջացել քաղաքական նոր համակարգեր փնտրելու, իսկ այդ ճանապարհին անհրաժեշտ է խորազնին հետազոտել նախորդ համակարգերը՝ դրանց փորձն ուսումնասիրելու և ձախողումների պատճառները բացահայտելու համար: Գաղտնիք չէ, Երրորդ հանրապետության տարիներին ՀՀ պետական իշխանության ղեկին հայտնված կուսակցությունները թեև հանդես են գալիս ժողովրդավարական արժեքների հաստատման կարգախոսներով, սակայն իրականում նրանց ձևավորած պետական կառավարման համակարգն ու վարվող քաղաքականության բովանդակությունը շատ կողմերով նմանվում են հնին: Խնդրի բարդությունը հեղինակը բացատրում է նրանով, որ տասնամյակներ շարունակ ամբողջատիրական համակարգին սովոր ու վարժ-ված հայ հանրույթը և նրա քաղաքական ղեկավարությունը իներցիայի ուժով շարունակում են նախկին մտածելակերպը և գործելակերպը, ինչը «երկիրը կարող է տանել այդ հնի ռեստավրացիայի»[2]: Հենց այդ պատճառով ու մտահոգությամբ էլ անհրաժեշտ է վեր հանել խորհրդային վարչակարգի էությունը, հաշվի առնել անցյալի փորձն ու դասերը, որպեսզի դրանք այլևս չկրկնվեն մեր օրերում:

Ապագայում երկիրն ու ժողովրդին մենիշխանության հաստատման վտանգներից զերծ պահելու այս մտահոգությունն է ուղղորդել Ա. Հակոբյանին ուսումնասիրելու 1920-ական թթ. Խորհրդային Հայաստանում կոմունիստական մենատիրության ձևավորման, միակուսակցական քաղաքական համակարգի հաստատման գործընթացները՝ ապագայում դրանք չկրկնելու ակնկալիքով: Քանի որ սիրողական մակարդակով անգամ այսօրվա հեռվից դրանք դիտարկելիս ակնհայտ է, որ անչափ շատ են նմանությունները ՀՀ Երկրորդ և Երրորդ հանրապետություններում իշխանությունների ձևավորման և շարունակականության գործընթացներում: Այսօր էլ 1920-1930-ական թթ. նման աստիճանաբար ձևավորվում է կուսակցական մենատիրություն, կուսակցական-բյուրոկրատական մենիշխանական համակարգ, և եթե գործընթացները շարունակվեն նույն հունով, ապա հեռու չէ նաև կուսակցական էլիտայի վերջնական ձևավո-ռումը:

Մանրամասնորեն քննարկելով խորհրդային կոմունիստական վարչակարգի ձևավորման պատմաքաղաքական հիմքերը և գաղափարական նախադրյալները՝ Ա. Հակոբյանը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ բոլշևիկյան վարչակարգի ձևավորումն ու հաստատումը ունեցել են իրենց պատմական ակունքներն ու նախադրյալները և անմիջական կապ տեսնում նախընթաց դարերի ռուսական միապետության (դեսպոտիզմի) և XX դարում հաստատված բոլշևիկյան միակուսակցական վարչակարգի միջև: Որպես հաստատում այդ տեսակետի՝ հեղինակը վկայակոչում է ռուսական պատմագիտության մեջ քաղաքացիություն ստացած այն տեսակետը, որ ինքնակալական համակարգը պաշտոնապես ներկայացվել է որպես Ռուսաստանի

---

[2] *Նույն տեղում, էջ 7:*

կառավարման բնորոշ միակ ձև ու քաղաքական արժեք: Իսկ դարերի ընթացքում ռուս հասարակության սոցիալական տարբեր խմբեր ու խավեր հարմարվել ու ընտելացել էին այդ համակարգին՝ իբրև բնական վիճակ: Հոկտեմբերյան հեղաշրջմամբ իշխանության եկած բոլշևիկներն էլ հեշտությամբ ընդօրինակեցին իրենց նախորդների վարչաձևը՝ միայն այլ լոզունգ-կարգախոսներ կիրառելով: Ինչպես ցարական ժամանակներում, այս դեպքում էլ առաջնային եղան համայնքի կոլեկտիվ շահերը, իսկ անհատի անձնական շահերը մղվեցին երկրորդ պլան և ստորադասվեցին կոլեկտիվին: Ինչպես նախկինում, երբ ռուսական հազարամյա պետության գերնպատակը եղել է պետականության ամրապնդումը, այս դեպքում էլ, իրավացիորեն նշում է հեղինակը, նույնը մնաց, իսկ մարդ-անհատը՝ պետական մեքենայի պտուտակը: Ընդ որում, այդ գործընթացում կարևոր նախադրյալ էր բնակչության կրթական և քաղաքական ցածր մակարդակը:

Պատմագետ-վերլուծաբանը արձանագրում է, որ այդ նույն մոդելի վարչակարգը, որ խորհրդային իշխանության ձևով ստեղծվեց Ռուսաստանում, հեշտությամբ պարտադրվեց հայ ժողովրդին՝ կապված էր ոչ այնքան ժողովրդի գաղափարական համոզմունքի, որքան 1920 թ. աշնանը նրա գլխին կախված ֆիզիկական բնաջնջման նոր վտանգի հետ: Էական էր նաև այն իրողությունը, որ հայր ցարի նկատմամբ ժողովրդական կույր հավատն ու պաշտամունքը մեխանիկորեն փոխանցվեցին նաև «բոլշևիզմի, այսինքն՝ սոցիալական ցարիզմի» էլիտային:

Անդրադառնալով բոլշևիկների համար կենսական նշանակություն ունեցող պրոլետարիայի դիկտատուրայի հարցին՝ Ա. Հակոբյանը համամիտ է ռուս նշանավոր տեսաբան Ն. Բերդյաևի այն տեսակետին, որ Լենինի համար մարքսիզմի տեսությունից ամենագլխավորը պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարն էր[3]: Քանի որ այդպիսի պետությունը ենթադրում էր իշխանության կենտրոնացում կուսակցության ղեկավար ընտրախավի (էլիտայի) ձեռքին (պետապարատը ձուլված էր կուսապարատին, և պետությունը ներկայանում էր որպես կուսակցություն-պետություն): Իսկ բոլշևիկներն առաջնորդվում էին հեղափոխական բարոյականությամբ, որն ինքնին ենթադրում էր նախ և առաջ ուժի գործադրումով ընչազուրկների անունից բռնության մեքենայի միջոցով ունեզրկել սեփականատերերին և հաստատել միակուսակցական քաղաքական իշխանություն՝ առանձին խավերի զրկելով երկրի կառավարմանը մասնակցելու իրավունքից: Այսինքն՝ հեղինակի կարծիքով, ինչպես իր հազարամյա պատմության ողջ ընթացքում, 1917 թվականին ևս, ժողովրդավարության և բռնապետության երկընտրանքի հարցում ռուս ժողովուրդը նախա-պատվությունը տվեց բռնապետությանը՝ ցարին փոխարինելով կուսակ-ցության առաջնորդով: Ի դեպ, այսօր էլ են նկատվում իրավիճակներ, երբ ստալինյան վարչակարգի նմանությամբ երկրում հարցեր են լուծվում կիսաքրեական մեթոդներով և կիսառազմականացված կանոններով:

---

[3] **Бердяев Н. А.** *Истоки и смысл русского коммунизма, М., 1990, с. 103.*

Իշխանության հաստատման գրեթե նույն գործընթացները ծավալվեցին նաև Հայաստանում, միայն թե ըստ հետազոտողի, քանի որ Հայաստանում բանվոր դասակարգ չկար, իսկ գյուղացիական հսկա մեծամասնության հանդեպ չի եղել բավարար քաղաքական վստահություն, Հայկոմկուսին մնում էր հենվել Կարմիր բանակի վրա և երկիրը կառավարել ռազմական բնույթի նորմերով: Այս դեպքում էլ կուսակցության ղեկավար միջուկը չգրված օրենքով համարվել է գերադաս ամեն ինչից[4]: Անաչառ հետազոտողի դիտարկմամբ՝ Հայաստանի պայմաններում իշխանության կուսակցականացման առաջին փորձը եղավ Առաջին հանրապետության օրոք, երբ 1920 թ. մայիսին ՀՅԴ Բյուրոն կազմեց կառավարություն, հարկադիր արձակուրդ ուղարկվեց խորհրդարանը, իսկ կառավա-րությունն ստանձնեց նաև օրենսդիր մարմնի գործառույթներ:

Զուգահեռելով խորհրդային իշխանության հաստատման գործընթացները Ռուսաստանում և Հայաստանում՝ հեղինակը նշում է, որ Հայաստանում այն պարտադրված էր և արհեստական: Իսկ ինչ վերաբերում է Հայհեղկոմին՝ իբրև բարձրագույն իշխանություն, ապա նա իրավական ու օրինական ուժ չուներ այն մասով, որ ամենևին ժողովրդական ապստամբության արդյունք չէր և ժողովրդական ներկայացուցչական մարմին լինելու որևէ հիմք չուներ: Այդ ամենով հանդերձ, նշում է հեղինակը, իրական ու փաստական իշխանությունը անբաժան կերպով պատկանում էր կոմկուսին, հատկապես նրա ընտրախավին: Հընթացս այդ գործընթացն այնքան էր խորացել, որ հանգեցրել էր կուսակցական մենատիրության, իսկ ավելի ուշ՝ ամբողջատիրության, որովհետև իշխանության միակ կրողը՝ Հայհեղկոմը, որևէ կուսակցության քաղաքական հենարանի ու աջակցության կարիք չուներ, նա այդ իշխանությունն ստացել էր Ռուսաստանի ու նրա Կարմիր բանակի օգնությամբ: Շատ կարևոր մի դիտարկում էլ է կատարել հեղինակը. Ռուսաստանում բոլշևիկյան կառավարության քաղաքականությունն ավելի հանդուրժողական և փոխզիջումային է եղել, քան Հայկոմկուսինն ու Հայհեղկոմինը: Մի բան, որ հետևանք էր Կարմիր բանակի մշտա-կան ներկայությանն ու գործակցությանը, և նպաստել է, որ հայ ղեկավարները անվերապահորեն ընդունեին և կատարեին Կենտրոնից իջեցված բոլոր հրահանգները: Հեղինակի ներկայացմամբ՝ ըն-տրություններն էլ ամբողջությամբ ձևական բնույթ են կրել Հայաստանում՝ իր հերթին նպաստելով կուսակցական նոմենկլատուրայի (պարտոկրատիայի) ստեղծմանը: Նոմենկլա-տուրային այն համակարգը, պարզաբանում է հեղինակը, որը ձևավորվեց Խորհրդային Հայաս-տանում 1920-ական թթ., ընդամենը համառուսաստանյան կուսակցական նոմենկլատու-րայի մանրապատկերն էր՝ հարմարեցված ՀԽՍՀ տեղական պայմաններին[5]: Ամբողջ երկրում հաստատվեցին ցուցակներ (պաշտոնացանկ), որոնցով պաշտոնների էին նշանակվում ըստ հիերարխիկ կառուցվածք ունեցող աստիճանակարգի: Ինչպես նաև իրենց զբաղեցրած

---

[4] **Հակոբյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 41-42:*

[5] *Նույն տեղում, էջ 179:*

պաշտոնին համապատասխան էին օգտվում հատուկ արտոնություններից և առանձնաշնորհներից:

Անդրադառնալով պետական իշխանության թևերի սահմանազատման և մի շարք այլ կարևոր խնդիրների՝ հեղինակը փաստառատ հենքի վրա համոզիչ կերպով ցույց է տալիս, որ այդ կարևոր գործառույթները ևս իրականացվում էին կուսակցության հրահանգներով: Իսկ վերջաբանում հեղինակը եզրակացնում է, որ ինքնակալական համակարգից բոլշևիկյանի անցումը կատարվեց սոսկ լոզունգային մակարդակում, իսկ բովանդակային առումով տարբերություններն այնքան էլ շատ չէին: Հավելվում է, որ այդ ամենը թեև այնքան էլ հարիր չէր հայկական հոգեկերտվածքին (մենթալիտետին), սակայն պարտադրվեցին դրսից և իրականացվեցին զանազան բռնությունների միջոցով:

Ընդգծենք, որ նշված հարցերին անդրադառնալն ու մերօրյա գործընթացների հետ զուգահեռներ տանելը բարդ ու տարողունակ խնդիրներ են, որ հեղինակը առաջադրել և վերլուծել է գիտական ճշմարտացի փաստարկումներով և հասուն ու նյութի խորիմացության հենքի վրա: Անկասկած, Ա. Հակոբյանի այս ուսումնասիրության առավելություններից է այն, որ իբրև հեղինակը պատմագիտական-աղբյուրագիտական հիմք օգտագործել է մեծաքանակ արխիվային ու վավերագիր նյութեր, փաստաթղթերի ժողովածուներ, կուսակցական ու պետական համակարգում աշխատող գործիչների հուշագրություններ, հաշվետվություններ, զեկուցումներ ու ամփոփագրեր, հին ու հատկապես ժամանակակից տեսական-մեթոդական նոր դիրքերից շարադրված պատմագիտական, քաղաքագիտական, փիլիսոփայական գրականություն, ժամանակաշրջանի պարբերական մամուլ և այլն:

Ամփոփելով նշենք, որ ընթերցողի դատին է հանձնվել հասուն, տարողունակ, բազմաշերտ ու նոր ասելիքով հարուստ ուսումնասիրություն: Այն առանձնանում է արխիվային փաստառատ հենքով, օտար աղբյուրների մտածված ու տեղին օգտագործմամբ, հիմնականում ընդունելի և հեռուն գնացող եզրահանգումներով, որոնցից ամենաէականը թերևս այն է, որ մեր նորանկախ հանրապետության գոյության քառորդդարյա ընթացքում ևս մշտապես առկա են նախորդ իշխանական համակարգի մնացուկները և դրանց վերարտադրության սպառնալիքները: Հեղինակի՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Հակոբյանի գլխավոր գիտական ձեռքբերումը դրանց արմատների բացահայտումն է, էության վտանգավոր լինելու մատնանշումը և հնարավոր վերարտադրության արգելափակումը:

ՍԱՐԳՍՅԱՆ Ս. Թ.
Պատմական գիտությունների դոկտոր